

**ՆԱԳԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԻ
ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԳ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ն. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Շարահարությունը՝ նախադասությունների անշաղկապ, առանց հարաբերական բառերի կապակցությունն է: Նման դեպքերում կապակցմանը նրապատում են նախադասությունների իմաստային փոխհարաբերությունը, հրնշերանգը, ստորոգյալների եղանակաժամանակային գործածությունը, լեզվաին կապակցության այլ միջոցներ:

Անկախ և կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունների¹ (այսուհետև՝ ԱՇԲՆ և ԿՇԲՆ) տարբերակման ընդունված ելակետը բաղադրիչ մասերի համեմատական անկախությունն ու կախյալությունն է: Դրանք տարբերվում են նաև ստորոգյալների արտահայտած նշանակությունների որոշ համապատասխանությամբ, բարդ նախադասությունների (այսուհետև՝ ԲՆ) կաղմի մեջ մտնող նախադասությունների շարահասական փոխկախվածությամբ²:

Ս. Աբելյանը գտնում էր, որ «Շարահարությունը խոսքերի կապակցության ամենապարզ, սկզբնական ձևն է», որը «հատուկ է ժողովրդական լեզվին...»³: Իր ժամանակաշրջանի ժողովրդախոսակցական լեզվից, բառ ու բանից, դարձվածքներից լայնորեն սնված նաղաշ Հովնաթանի ստեղծադրությունների ԲՆ-երի կապակցության կառուցվածքը քննելիս հանդիպում են զգալի թվով շարահարությամբ ԲՆ: Դրանք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ինչպես իրենց արտահայտած իմաստային նրբերանգներով, այնպես էլ լեզվական այլևայլ իրողությունների շարքում՝ ժամանակի խոսակցական հալերենի և արդի հայերենի լեզվամտածողության համընկնումներով: Հովհ. Թումանյանը իզուր չէր դրապատմական հատկանիշների կողքին շեշտում Հովնաթանի տաղերի լեզվական հետաքրքրականությունը, նկատելով, որ նա ժամանակի կյանքից ու կենցաղից, վարք ու բարքից, մարդկային հարաբերություններից մեծատաղանդ նկարչի և բանաստեղծի աչքով ու զգացողությամբ «էնքան մանրամասնություններ է պատմում»⁴: Այդ մանրամասնությունները պատմվում-նկարագրվում են ժողովրդական կենդանի խոսքով, որով և կրկնապատկվում է նրա տաղերի լեզվական պատմական արժեքն ու նշանակությունը:

Հովնաթանի տաղերի ԱՇԲՆ-երը բնութագրվում են համաժամանակության, զուգադրական-հակադրական, հարակցական իմաստային հարաբերությունների դրսևորումներով: Համաժամանակությունը միևնույն ժամանակահատվածում թվարկվող գործողությունների կապվածությունն է, երբ ԲՆ-երը ձևավորվում են ստորոգյալների ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր եղա-

¹ Գ. Դարեգինյանը իր «Ժամանակակից հայոց լեզու» աշխատությունում ընդունում է համապատասխանաբար բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններին հարաբերակից անշաղկապ կապակցությամբ կառույցներ ձևակերպումը: Գ. Դարեգինյան. Ժամանակակից հայոց լեզու. Երևան, 1984, էջ 304—305:

² Վ. Առաքելյան. Հայերենի շարահյուսություն. հ. 2, Երևան, 1964, էջ 364:

³ Ս. Աբելյան. Երկեր. 2, Երևան, 1974, էջ 502:

⁴ Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. IV, Երևան, 1951, էջ 189:

նահաժամանակային ձևերով. Վարդերն կու բացուի, խօսի բլբուլն, Մէջի-սի մէջ ցրուեն՝ ուէհան, սմբուլն⁶, Յաւուս գարնան եղանակին փթթեալ ծաղ-կեցաւ այգին, Հնչէ ֆաղցր ձայն տաւորակին (164), Աշխերդ ինձ այրեց զինչ ամոռան արեւ, Ինձ բարձիշ արեց քո սիրոյ նաւն (25), Ահա գարուն, եկաւ մարտն, Կու շտտանալ սիրոյ տարտն (38), Ընկալ քո մեղաց ծովն, էլ չի մը-նայց հոգոյ պաշար (23)⁷:

Ժամանակային հաջորդականություն՝ գործողությունների հաջորդում ժա-մանակային առումով, դրսևորող ԱՇԲՆ-երը, թերևս հիշեցնում են «այսուհե-տե» նշանակությամբ՝ ապա, ապա թե, և ապա շաղկապների, նախ... ապա զու-գադիբ շաղկապի գործածությունները. Գա՛մ, քեզի մօտ նստիմ, տո՛ւր սիրոյ զինի... (16), Ասաց քէ. «Երկու յաւ հաւ են բերել, երկու ֆալցած մարդ եկել են, կերել, Ըսանք են տուել, տունս ամերել... (52): Տաղերի նման հախաղաղու-թյուններում արդեն առկա է մեկից մյուսին փոխանցվող միջնորդավորված գործողությունների պատճառահետևանքային առնչությամբ հետևանքի որո-շակի երանգ⁸. Ղալամ ունեւերդ կու խաղայ, Կու տեսնիմ՝ սիրտս կու դողայ (36), Դու իմ խելին տարաւ, ես շունիմ դարաւ (54), Գնաց աշուն և ամառն, Յաւամբեաց ծաղկունմ և ծառն (72): Նշված տեսակի հախաղաղությունները տաղերում նաև եռաբաղադրիչ են. հախաղաղությունների թվարկվող-միավո-րէլ գործողություններին հետևում է երրորդը, որքանով հետևանք-հետևություն բառերը հենց լիցքավորված են ժամանակի հաջորդականության իմաստով. Սիրամարգի նման ֆալլին, Աստղանման գունով ֆալլին, Տեսողքն գարմանն, մալլին՝ Վրաստանայ գոգալներ... (13), Առաւօտուց կելնես՝ սիրամարգի նը-մուն շողշողալով՝ Խելիս ցրուի, կու մնայ ղալամն ձեռացս դողդողալով (35):

Համաժամանակության տարբերակ են մասնակի համաժամանակության⁹ հարաբերություն արտահայտող ԲՆ, որպիսիք, սակայն, տաղերում քիչ են ուր-ծածված. Նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն (34), Նոր գարուն է, հնչեաց հաւաւ (56), Գարուն եղև, ֆաղցր խօսի բլբուլն (40):

Հակադրական հարաբերությամբ ԲՆ-ում հակադրվում են երևույթներ, դեպքեր, գործողություններ, անձինք: Նշված տեսակի հախաղաղություններում դրսևորվում են. ա) զուգադրական-համեմատական՝ Դու ծոցէդ հանէ ուերկե-վիլ, նուռն, ես բերեմ զինի, տապակած հաւն (25), ես եղէ քեզ հէլյրան, Դու՝ մարալ-շէլյրան (34, 35), Քո սէրն կրակ է, իմ սիրտն՝ Լուրայ (54), Դու Լեյլի ջրնուն, զալում, ես եղէ Մէջլուն, զալում (8), ապա Լ՝ ք) հակադրական հա-րաբերություններ՝ Մագ մանօղներուն նրազն վառուեց, Ձէրպապ գործողին սիրտն պատառուեց (80), Մրի եարէն կուգալ, Լեզուինը չի գար (90), Կուչ են եկած ինչպէս հուրայ, Դունչ տալոյ վախտ լեզուն սուրայ (123): Զուգադր-մանն ու հակադրմանը հաջորդող հետևանքային հարաբերությամբ է իմաստա-վորված՝ ես հիւանդ էի, մէլլ իր տվել. Ողջացալ, զալում, զալում, Հնչտացալ,

6 Սամանական ներկան տաղերում դրսևորվում է զրարարյան ներկայով, կու, և մաս-նիկ+զրարարյան ներկա, -ում անկատար դերւյալ+եմ օժանդակ բայի ներկա ժամանակ կա-ռուցվածքով:

7 Ն ա դ ա շ Հ ո վ ն ա թ ա ն. Բանաստեղծություններ. Երևան, 1951, էջ 167 (այսուհետև՝ էջերը կտրվեն տեքստին կից, փակագծերում):

8 Վ. Առաքելյանի հավատումով, անցյալ կատարյալը ընդհանրապես սակավ է միաժա-մանակություն արտահայտում, քանի որ ցույց է տալիս միանգամայն գործողություն առանց ժամանակային ներկար տեսողություն: Վ. Առաքելյան. Նշվ. աշխ., էջ 302:

9 Հմմտ.՝ Գ. Գարեգինյան. Շաղկապները ժամանակակից հայերենում. Երևան, 1963, էջ 114: Ն. Պառնասյան. Անշաղկապ բարդ հախաղաղությունները ժամանակակից հայե-րենում.— Լեզվի և ոճի հարցեր, II, Երևան, 1964, էջ 33:

9 Մասնակի համաժամանակությունն այն է, երբ գործողություններից մեկը արտահայտ-վում է տևական ժամանակով, մինչդեռ մյուսը համընկնում է միայն մի պահին: Մասնակի համաժամանակության մասին տե՛ս Վ. Առաքելյան. Նշվ. աշխ., էջ 298—299: Ն. Պառ-նասյան. Նշվ. աշխ., էջ 29—30:

զալում, զալում (8) նախադասությունը, որտեղ գործողության միջնորդվածության հետ, թերևս, զգացվում է որոշ բացատրական երանգ:

Նաղաշ Հովնաթանի տաղերը (մեծ մասամբ սիրո) բնութագրվում են զուգադրող-համեմատող գործողությունների, երևույթների, իրողությունների հակադրությամբ, ասել է՝ բանաստեղծի և «զալում ետրի» հոգեմիջակների, հուզապրումների, նրանց գործողությունների համեմատությամբ: Զուգադրական-հակադրական հարաբերություն արտահայտող ԱՇԲՆ-երից են. Առաւօտուց վարդ կու բաղես, Ինձ լաց կանես, դու՝ ծիծաղես (36), Իմ սիրտը արուն արիւր, դու՝ կելնես շուռ գաս ծիծաղելով (32):

Տաղերի զոդվածով կառույցներում հակադրական (նաև զուգադրական-համեմատական) հարաբերությամբ են գործածվում բայց, իսկ, և, այլ, քէ չէ (կամ քէ չէ), էլ շաղկապները, իսկ հակադրական-համեմատական երանգով՝ կում շաղկապը. Ե՞րբ կարէ՛ ձեռն տմբուզին, Զարպով տալ վերայ սուր բզին, Կում չոր փուշն, որ շատ դիզին, Անկէզ մնայ կրակի վիզին (111):

Հարակցական (հավելական) կապակցությամբ շարահարական կառույցները, ԲՆ-անը հաղորդելով լրացական-բացատրական երանգ, ավելի համակողմանիորեն են բացահայտում նախադասության իմաստը: Լեզվաբանական գրականություն մեջ նշվում է, որ նման դեպքերում բաղադրիչ նախադասություններ իմաստային կապը ավելի թույլ է, և բաղադրիչ մասերը համեմատաբար ավելի ինքնուրույն են: Դա տեսնում ենք նաև Հովնաթանի հետևյալ չափատողերում. Գոհանամը դտեառնէ, որ ունիմք սեղան. դոմ միշտ շէն կենալի (159), Ղալապալուղ է. Բեֆերս է հասեալ այսօր խիստ աղէկ (160), Բեշէք րուֆթալ, սիշտնով չորթան, Թասն լից տուր Յովնաթանն, Ատուած լաջողեսցէ ձեր բանն (177): Հարակցական հարաբերությամբ ԲՆ-երը տաղերում առանձնանում են և բացատրական շեշտված երանգով. Մէկ գիշէր ինձ տար ծոցը պանէ, Բեզ սողաշ եմ... (31), Ինչ ինձ արել ես իմ խելիքն մոլոր, դար-դերս եղև շատ քաջալ և նոր (49), Իմ ետրնն նստել դամով, Լեզուն փանց շա-մար համով, Ինձ կու սիրէ իւր կամով (62), Ախ, երանի էն դամն, Ուր կերայ հտին անդամն, Բերանումս մնաց համն (145) և այլն: Հարակցական, մասամբ և բնութագրական-բացատրական է՝ Սուտ աշխարհս անցաւոր է, մութն ետազ կու նմանի (184), Բնաւ խելի շունի, իսպառ շեր է (135) տողերի արտահայտած հարաբերությունը: Իբրև նմանատիպ նախադասություններ կարելի է դիտել նաև այն ԲՆ-երը, որոնց երկրորդ բաղադրիչը պարունակում է հարցում, քանի որ հարցը հավելական մի նոր երանգ է ավելացնում հաղորդվածին. այսպես՝ նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն, է՞ր իմ սիրտս կանես ետրալու արին (34), Նս որ պինդ հոգոց կու հանեմ, է՞ր չես իմանալ, ծոցիդ ծածուկ մտիկ կանեմ, է՞ր չես յետ բանալ (46), Գնաց առուն և ամառն, Յամաբեաց ծաղկունն և ծառն, Ո՞ւր է քո արած իղարն, էհտիրարն (72):

Ըստ Մ. Աբեղյանի՝ շարահարությամբ կապակցություն է նաև «միավորյալ խոսք ասածը, որի մեջ մի քանի համադաս խոսքեր միանում են մի ընդհանուր ենթակայով»¹⁰: Այդպիսիք որոշակիորեն միջանկյալ դիրք են զբաղում ԱՇԲՆ և ԿՇԲՆ-երի շարքում, որքանով համեմատաբար անկախ են, միաժամանակ՝ համեմատաբար կախյալ: Զափածո խոսքի կարճառոտության, հանգի, ոտքի թելադրանքով տաղերում բազմաթիվ են զեղչված ենթակայով միավորյալ բնույթի ԱՇԲՆ-երը: Դրանք կարելի է տարբերակել. ա) համաժամանակություն՝ Գիր էի գրում քո անուանն, Միտք է անում քո սիրոյ բանն (9), Մով աչքերովդ դամգալ փաշես, Սուր դանակով կուտաս ինձի (19), ես գունահա-տար, մեղաց գերի նաղաշն եմ, Քեզ տեսնելով, ախ փաշելով կու մաշվեմ (41), բ) ժամանակային հաջորդականություն՝ Թասն խմէի, մէկ ողորմի ասացէի իւրեանն (179), Զիմ խելին առիր, դու գիս արիւր դիւանայ (192), Մոցդ լցել ես ունեմ, մեխակով, Իմ սրտին կուտաս սրած դանակով, Զիկարս այրեցիր ան-շէշ կրակով (49), գ) զուգադրական-հակադրական հարաբերություններ նշող

¹⁰ Մ. Աբեղյանի. նշվ. աշխ., էջ 539:

Նախադասությունների՝ Չեն ճանաչել գիրք և ճաշոց, Պատարագին ածեն ֆշոց (118), Աղփատ մեռելին խոսվին, Հարստին վրայ ժողովին (121), Չասելու բանն քո տանն չասես, Լեզուդ կու սուլի՝ ալոց էլ կասես (90):

Համաժամանակության հարաբերությամբ հետևանքի երանդ արտահայտող վերը նշված եռաբաղադրիչ ԲՆ-երից սիրերգերում զգալի թիվ են կաղմում միավորյալ բնույթի նախադասությունները. Պաղչումն ծաղիկ փաղես, Մածուկ ղէյ ինձ ծիծաղես, Կրակով սիրտս դաղես (63), Ղեղաջ աչքով մտիկ անես, Միծաղելով հոգոց հանես, Ունեբերով ինձ կու սպանես (47), Մարմինդ զառքարով նոր զարդարեցիր, Մացդ նշանց տվիր, ալվի ծածկեցիր, Իմ սիրտս երեյով կարօտ պահեցիր (35): Դրանք բանաստեղծի սիրո կարոտի ու տառապանքի, աշպես ասած, միավորված բաղմաստիճան դրսևորումներն են՝ բանաստեղծի հոգեկան վիճակի ու սիրած «ղալումի» անտարբերության բաղմաստի շերտերով:

Ինչպես ժողովրդական երգերում, այնպես էլ Հովնաթանի տաղերում, միավորյալ բնույթի ԲՆ-երի կապակցմանը հաճախ մասնակցում է կրկնադիր դործածությամբ է՞ր հարցական դերանունը. է՞ր գրագիր սովորեցիր, է՞ր չի քո տանն նստեցիր (112), է՞ր չես կտրում, է՞ր չես դուրում... է՞ր չես վաճիճ ալ-գին բում (148): (Հմմտ.՝ Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի համանման կաղմության հետևյալ տողերը՝ Ընչի՞ չես խոսում, Ընչի՞ չես նայում... Դու իմ դեբեղմանն Ընչի՞ ես խըրում...)¹¹:

ԿՇԲՆ-ում կամ, ինչպես արդեն ասվել է, բարդ ստորադասական նախադասություններին հարաբերակից անշաղկապ կապակցությամբ կառույցներում, բաղադրիչ նախադասություններից մեկը լրացնում է մյուսում բացակայող որևէ անդամը, առավել ամբողջացնելով նախադասության իմաստը: Փոխադարձ կախվածությամբ բնութագրվող կախյալ շարահարությամբ կառույցները դրսևորում են ենթակայական, նրա լրացումների, ստորոգելիական վերադրի, խնդրալին, պարագայական հարաբերություններ:

Ենթակայական հարաբերություն արտահայտող տաղերի սակավաթիվ շարահարական կառույցներում կախյալությունն արտահայտվում է նախորդ նախադասության ստորոգյալի բաղադրյալ կաղմությամբ. Լավ է՝ քո պարոն կենդան չի (39), Շատ վախտ է՝ աչքով չես տես (52): Քննելով բարդ ստորադասական նախադասությունները, Վ. Առաքելյանը առանձնացնում է չի-նի՞ + թե... կաղսպարով ենթակա երկրորդական նախադասությունները¹²: Տաղերում հանդիպում են ակնհայտորեն ժողովրդախոսական լեզվի ազդեցությամբ ձևավորված շարահարական նման կառույցներ. Չի՞նի՞ ձեռս ծոցեդ չոկիս (44), Չի՞նի՞ ինձ մոռանաս, քարգես (47), Քո փորձած մարդն, չլինի՞ նոր փորձես (90), Չի՞նի՞ մարդու տա՛լ վնաս (186), Չի՞նի շատ խմե՛ք դառնա՛ք բոց (88): Համանման բնույթի են նաև՝ Ինչ կելնի՞ ինձ ձեր տուն տանես (27), Ինչ կելնի՞ դուշմանն անարգես (56), ԲՆ-երը, որոնք, սակայն, ունենալով որոշակի պայմանականության երանգ (Ինչ կելնի... եթե...), պարունակում են և գործողության արժեքավորման իմաստ (Հմմտ.՝ ռուս. Добро бы, плохо бы¹³):

Լեզվաբանական գրականության մեջ արձանագրվում է, որ հատկացուցիչ երկրորդական նախադասություններով շարահարական կապակցությունները հազվադեպ են: Որքանով հաջողվել է պարզել, Հովնաթանի ստեղծագործությունում այդպիսիք չկան (Հմմտ.՝ դոգմածով կառույցները՝ Գիտեմ, ով որ մլ-տիկ արած՝ նրա հոգին է շուտ մեռած (61), Ով գավր կանի՞ Ստեփանն Մական աստուած առնի ջանն (146): Սակավ են բացահայտիչի հարաբերություն արտահայտող ԿՇԲՆ-երը: Գտնում ենք մեկնական երանգով մասնական բացա-

11 Հովհ. Թումանյան. Ընտիր երկեր. Երևան, 1953, էջ 204:

12 Վ. Առաքելյան. նշվ աշխ., էջ 111:

13 Т. А. Колосова, М. И. Черемисина. О принципах классификации сложных предложений.—Вопросы языкознания, 6, 1984, с. 74.

Հայտնի¹⁴ շարահարական կապակցությամբ հետևյալ բարդ նախադասություններ՝ Մոցդ կալ երկու ֆաղաֆ զառնշան, Մէկն Ըսպահան է և մեկն Քեաշան (50): Թերես, ալդպիսին կարելի է դիտել և ժողովրդախոսակցական լեզվի նմանությամբ առավելագույնս համառոտված՝ Մինն Հէյգար, մինն Զումար, Սխալ խառնափնդուր տամար (122) անվանական նախադասությունը:

Ստորոգելիական վերադրի հարաբերություն արտահայտող ԿՇԲՆ-երի կառուցվածքային առանձնահատկությունը՝ հարաբերյալի առկայությունն է գլխավորում: Բացառություն չեն և Հովնաթանի տաղերի նման կարգի նախադասությունները. Կամֆդ էն ալ ինձ քապանես (28), Խելոֆ մարդն այն է՝ իւր չափն իմանայ (89), Լու մարդն այն է, ինչպէս եկեալ է՝ էլ այնպէս գնայ (161):

Հետաքրքրական է, որ վերը ներկայացված ԿՇԲՆ-երը և դրանց զոդվածով՝ կառուցները տաղերում համարյա հավասարաչափ սակավ գործածություն ունեն: Այս և նման կարգի երևույթների բացատրությունն այն է, որ, ինչպես ժողովրդական խաղիկներն ու երգերը, Հովնաթանի տաղերը պարզ ու անմիջական պատկերավոր հյուսվածքներ են, ուրեմն և՛ շունեն բաղմապիսի առնչակցություններով ազդեցվող հուզախոհական կուտակումներ:

Այլ է որոշչային հարաբերություն դրսևորող ԿՇԲՆ-երի գործածությունը: Թեև այս դեպքում էլ հաճախական է գլխավոր նախադասության միենություն՝ Ենթ+ՍՏ..., կաղապարային կառուցը. Մարդ կայ՝ մարդասպան է և ընկեր գողի, Մարդ կայ՝ իւր կամաւ աշխարհս կու թողի, Մարդ կայ՝ մեղաց մէջ տալիս է լողի, Մարդ կայ՝ արտասուօք մեղքն կողողի (91), Մարդ կայ՝ չի կարել մէկ փողի մանէ (82), Մարդ կայ՝ սարհդապ և դիւանբուռ է (84):

Համատիպ ԲՆ-երի ձևավորմանը տաղերում երբեմն նպաստում է մէկ (մի) անորոշ գերանվան առկայությունը նախորդ նախադասության մեջ. Ունիս մէկ փիս դայտայ... Ուրնած հաւ կուտես զինչ զեատայ (114): «Անկախ» (առանց հարաբերական դերանվան) դրսևորում ունի որոշչային հարաբերությամբ շարահարական կառուցվածքը. Կարդացող շատ կայ, խելֆն քերե է (83), Երկու ուղիւ էր քազաուր, Փող դատեցին շատ գօրաուր (112) չափատողերում: Փոքր-ինչ մեկնական է ...խմէի անուշ զինին, բաժակ է անապական (180) նախադասության որոշչային հարաբերությունը:

Դրանց կողքին հաճախական են խնդրային և պարագայական հարաբերություն արտահայտող նախադասությունները (ինչ դիտվում է և նրանց զոդվածով կիրառությունների ժամանակ):

Խնդրային հարաբերությամբ շարահարական ԲՆ-ում վճռորոշը խնդրառու բայի առկայությունն է: Ուղիղ խնդրի հարաբերություն արտահայտող կառուցներում օրինաչափ է ներդրոժական սեռի ասացական, իմացական, պգայական, կամական բայերի գործածությունը. Ասել ես՝ քէ «նա որ նաղալ է, Գիտէ՛ ունֆնս դարաղալ է, Ասէ՛ սուրաքիս նման ֆաշէ» (9), Գիտեմ, ով որ մտիկ արած՝ Նրա հոգին է շուտ մեռած (61), էնտուց յետ կուգես՝ խրատ տա վարսետն (87), Խնդրեմ՝ ներեսչի՛մ իմ պակասութեան (92), երթամ, աղաչեմ, բալի ըռահմ անի, դուրն րանայ (24), Ճանապարհդ կու նայիմ, տեսնեմ՝ ե՞րբ կուգաս (42) և այլն:

Անուղղակի խնդրի հարաբերության ձևավորումը կախված է բայիմաստից: Տաղերում անջատման անուղղակի խնդրի շարահարական կապակցությամբ կառուցները հանդիպում են վախել, խապար լինել բայերի առկայությամբ. Խապար եմ՝ ֆեզ էլ միտմ ունես (38), Վախեմ ամէն քողնիֆ, փախչիֆ... Վախեմ սուպապ նոցա գալն, Իրիցներն գցեն մալն (122): Զոդվածով նմանատիպ կառուցներում իշխում է քէ շաղկապը, հմտ.՝ Խապար չեմ քէ Քեզ ի՞նչ արի (37), Վախեմ՝ քէ կրակ տա՛մ, էրիֆ (122) և այլն:

Ինչ վերաբերում է պարագայական հարաբերություն նշող ԿՇԲՆ-երին,

¹⁴ Ա. Պ ա պ ո յ ա ն. Կախալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հանրեմում. Եռեան, 1968, էջ 101:

ապա, որքանով Հովնաթանի սիրերգությունն իր լիցքով ըզձերգություն է, դրա թելադրանքով նրա սիրային տաղերում ավելի քան հաճախակի են նպատակի հարաբերությամբ Բն-երի ինչպես զոգվածով, այնպես էլ շարահարական կառույցները: Շարահարական նման կառույցներում ստորոգյալը առավելապես դրված է հրամայական եղանակով, և բանաստեղծական խոսքը իրենից ներկայացնում է հրամանի և իղձի յուրատեսակ իմաստային խառնուրդ: Գիր ուղարկի՝ սիրտը հովանայ, ծածուկ ուղարկի, մարդ շիմանայ (9), Դու ինձ հետ գրուցի, հալոդ իմանամ... (18), Ն'կ, իմ դարբու սրտիս ետէ՛ր բանամ (18), ...նկ՝ համբուրեմ (48), Դու զիս սիրէ, աշխարհ-ալէմ իմանայ (92) և այլն: Նպատակի հարաբերությունը «միտք անել» բայական հարադրությամբ շեշտված-սաստկացված է Արիւն անելու մի՞տք ունես, հագել ես կարմիր սւրա-սար (32) նախադասությունում, որտեղ նպատակի հարաբերությամբ շարահարական կառույցն առաջադաս է: Որոշակի ցանկություն իրագործելու նպատակ են արտահայտում և հետևյալ տողերը. Այս գիշեր դուռն բաց թողնեմ՝ Մեր տուն գաս (36), Ինձ ծախեմ՝ էդ բախչէդ առնեմ (48), Սիրտս մէկ համբուրել կամի՛ Սէրն քամամի (71):

Պատճառի հարաբերությամբ ԿՇԲՆ-երը տաղերում առանձնանում են կառուցվածքային այնպիսի կաղապարով, որտեղ նախորդ նախադասության ստորոգյալը արտահայտված է արգելական հրամայականով կամ ժխտական խոնարհման բայով, ինչպես՝ Նըշանց մի տալ, դալում-քաֆիր, խեղճ է իմ հոքին (21), Ձեմ կարիլ դալամով քաշիլ պատկերիդ նման, Ջալում եար, խիստ ես աննման (46), Ինձ հետ մի կենար զինչպէս դուն-աղան, Քեզ շատ կու տիրեմ... (49), հապար ու գիր շեռ ուղարկում, նրա համար խիստ եմ դառն (52, պատճառը շեշտված է և նրա համար կապակցությամբ), ես դարիպ եմ, դիսլ-շիլ մի երած սրտիս (40. հտադաս կիրառություն): Ընդգծված ստորոգյալը, արտահայտելով պատճառը, ասես, նպատակում է խոսքի վերաիմաստավորմանն ու միաժամանակ իմաստի բացատրությանը: Այս օրինակները ևս հաստատում են, որ նախադասության այդպիսի կառուցվածքը հատուկ է ժողովրդական լեզվամտածողությանը, այլև այն գրողների լեզվին ու ոճին, որոնք մոտ են կանգնած ժողովրդական ստեղծագործության ակունքներին:

Տաղերի նմանատիպ նախադասություններում ստորոգյալը նաև բաղադրյալ է կամ բայական հարադրություն՝ Յաւոտ սիրոյդ ես հիւանդ եմ, ես քան զՖեգ դարդիմանդ եմ (38), Շէյտայ բլբուլ եմ, տեսույ կարօտ եմ մնացել... Լալով շուռ կու գամ, կանանչ գարունն է գնացել... (30), Բնալ խելի շունի, իսպառ շէք է, Կատուն արեւ է իւր եղբայր (135):

Նշված շարահարական կառույցին իմաստային առումով մոտ են հետևյալների հարաբերություն արտահայտող ԿՇԲՆ-երը: Հովնաթանի երգերում զբրանք, թերևս, կարելի է տարբերակել իբրև պատճառահետևանքային հարաբերությամբ շարահարական կառույցներ, ինչպես՝ Լուսին երեսդ ամէն օր կու նորի, Քեզ տեսնողին խելին ի՞նչպէս բոլորի (42), Քո սիրոյդ ես հիւանդացայ, Աշխարհին ամեն մոռացայ (72), ես սիրոյ բանի չէի խապար, Մէկ օր ինձ տուիր վարդի նուբար, Սիրտս վառեցիր քեզ բարէբար (8), Կու նայիմ խալ-խալ պատկերիդ, Ապուշ մնամ, Ձեռաց գնամ (38), Օով աշֆերիդ մտիկ կանեմ՝ ձեռաց կու գնամ (46), Պասին կու դատարկվի ձեր ձեռն, Կու քրջէ՛ք բակլայ, սիսեռն (176): Այս տիպի նախադասությունները հեշտությամբ կարելի է և շփոթել հետևանքի երանգով միաժամանակության հարաբերություն նշող ԲՆ-երի հետ:

Ի հակադրություն ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների, որոնք առանձնանում են ոչ միայն կապակցման միջոցների բազմազանությամբ, այլև արտահայտվող իմաստային նրբերանգներով, կախյալ շարահարությամբ այդօրինակ կառույցները քիչ են: Դրանցից են՝ ժամանակա-ին հաջորդականության երանգով արտահայտվածները՝ Տէրտէրն այս բանս իմացա, Խր երեսին գոյնն դարձաւ (142), Գիր էի գրում քո անուանն, Միտք

ի անում քո սիրոյ բանն, Ետնէս ուղարկեց Վսիտանց Խանն (9): Ապա և՛ հե-
տեանքի երանգ ունեցող այս օրինակը. Միտրս եմ բերում, գալում, Ես խիստ
եմ երվում, գալում (8): Կարելի է ասել նաև, որ վերջին դեպքում, թերևս,
զղացվում է որոշ պայմանականություն, համա՛խ [եթե] Միտրս եմ բերում...
Ես խիստ եմ երվում...: Պայմանի հարաբերություն նշող Բն-երը տաղերում
դրսևորվում են «աստուած սիրէք» դարձվածքով. Աստուած սիրէ՛ք՝ գրնացէ՛ք,
տեսէ՛ք, քէ իմ հարբն տա՞ն ալ (24), Աստուած սիրէ՛ք, ում սրտում ու նախանձ
կա՛՝ հանի (184): Դարձվածային արժեք ունեցող «աստուած սիրէք» արտահայ-
տությունը փոխարինում է «եթե աստծուն սիրում եք...» պայմանի պարագա-
ներկրորդական նախադասություն: Հասանման կազմություն կարելի է դիտել
և՛ Հոգիդ սիրես, ինձ մէկ պազ տուր... (36) շարահարական կառույցը՝ «եթե
հոգիդ սիրում ես...»:

Նաղաշ Հովնաթանի տաղերի քննվող շարահարական կապակցությամբ
Բն-երի տիպերը խորապես հարազատ են աշխարհաբար հայերենի զարգաց-
ման արվեստական շրջանին: Այդ տիպերից յուրաքանչյուրից առատ օրինակ-
ներ կարելի է քաղել «Վերք Հայաստանիից», այլև ավելի ուշ՝ Հովհ. Հովհան-
նիսյանի, Հովհ. Թումանյանի, Ալ. Իսահակյանի ստեղծագործություններից, որ
նշանակում է, թե շարահարական այդ ձևերը կենդանի գործածությամբ հա-
րատել են ժողովրդախոսանքայինում և փոխանցվել դրական լեզվին:

БЕССОЮЗНЫЕ СЛОЖНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В ПЕСНЯХ НАГАША ОВНАТАНА

Н. Г. ОГАНЕСЯН

Резюме

Сочинительные и подчинительные бессоюзные сложные предложения, встречающиеся в песнях Нагаша Овнатана, представляют определенный интерес не только своими смысловыми оттенками, но также явлениями соответствия языкового мышления, характерного для разговорных стилей армянского языка XVII—XVIII вв. и для его современного состояния. В статье рассматриваются сочинительные бессоюзные сложные предложения, выражающие смысловые отношения одновременности, сопоставления, противительности, парцелляции, а также подчинительные бессоюзные конструкции, выражающие отношения взаимной зависимости.